

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-042-21.08.2012-ՍՀ-010/0) վերաբերյալ:

1. Ներկայացված օրենքի նախագիծը հակասում է «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

1) 1-ին հոդվածին, որով սահմանված է՝ սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում պետական նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները.

2) 3-րդ հոդվածի 2-րդ մասին, որով սահմանվում է պետական նպաստների տրամադրման նպատակը:

2. Համաձայն «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի՝ պետական նպաստ ստանալու իրավունք ունեն ինչպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, այնպես էլ՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ նույն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

Օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու դեպքում «Ջոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքի նպաստ» ծրագրից լրացուցիչ կարող են օգտվել ոչ միայն ԼՂՀ նախագահի հրամանագրով պարգևատրված 64 Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտանիքները, այլ նաև՝ ԼՂՀ քաղաքացի համարվող, զոհված՝ Արցախի հերոսի՝ 4 և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձանց 311 ընտանիքները:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 20-ի «Ջոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստի վճարման կարգը հաստատելու մասին» N 255-Ն որոշմամբ սահմանված է, որ, դիմողի ցանկությամբ, նպաստը կարող է վճարվել անկանխիկ, նրա նշած բանկային հաշվին դրամական փոխանցմամբ: Նշված 315 ընտանիքից որևէ մեկի՝ ընդամենը մեկ-երկու ամիս Հայաստանում փաստացի բնակվելու հանգամանքը կարող է հանգեցնել նրանց նպաստի վճարման՝ նպաստի իրավունքի սահմանված ժամկետներով (զոհվածի այրու և ծնողի համար՝ ցմահ), իսկ նրանց՝ ԼՂՀ-ում բնակվելու պարագայում՝ այլ հավասար պայմաններում այդ ընտանիքների նպաստի իրավունքը չի ճանաչվելու, և խնդիրը մնալու է չլուծված:

4. Նախագծին կից հիմնավորման մեջ նշված է, որ առաջարկվող փոփոխությունը՝ ազգային հերոսի կոչում շնորհելու կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրելու ժամանակ առաջնորդվել ինչպես Հայաստանի Հանրապետության Նախագահի, այնպես էլ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի հրամանագրերով, հանգեցնում է շահառուների թվի ավելացմանը և, հետևապես, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրացուցիչ հատկացումների անհրաժեշտության (համաձայն օրենքի նախագծին կից հիմնավորման մասին տեղեկանքի՝ այն կկազմի 83.8 մլն դրամ), որի համար Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով միջոցներ չեն նախատեսված:

5. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն, մասնավորապես, օրենքի նախագծի 1-ին հոդվածը «5-րդ հոդվածի» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «1-ին մասի» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջները:

Ներկայացված օրենքի նախագիծը, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75-րդ հոդվածի, պետք է ընդունվի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում օրենքի կատարումն սպահովող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 20-ի «Զոհված՝ Հայաստանի» հրամանով սահմանված կարգով:

տանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստի վճարման կարգը հաստատելու մասին» N 255-Ն որոշման մեջ անհրաժեշտ փոփոխությունը կընդունվի օրենքի ընդունմանը հաջորդող բյուջետային տարվա ընթացքում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## **ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

**«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում  
կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

2013 թվականից Նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեից կրերի լրացուցիչ 83.8 մլն դրամի չավով հատկացումների անհրաժեշտության (համաձայն Նախագծին կից հիմնավորման վերաբերյալ տեղեկանքի):

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
նախագծի վերաբերյալ**

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի  
(այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի  
ունենա:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

**«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
նախագծի վերաբերյալ**

Նախագծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ**

**ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
նախագծի վերաբերյալ**

1. Նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Նախագծի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:



**ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
Նախագծի վերաբերյալ**

Նախագծով սահմանվում է սոցիալական աջակցության հավասար պայմաններ Արցախյան ազատամարտում զոհված ազգային հերոսների, ինչպես նաև Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձանց ընտանիքների համար:

Նախագծի մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում ապրանքային շուկաների հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

**ՏՆՏԵՄԱԿԱՆ, ԱՅԳ ԹՎՈՒՄ՝ ՓՈՔԲ և ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
նախագծի վերաբերյալ**

Նախագծի գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է նպաստառուների շրջանակի ընդլայնմանը՝ շահառուների մեջ ներառելով նաև Արցախի հերոսներին և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձանց* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
նախագծի վերաբերյալ

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն,**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **դրական ազդեցություն:**

Պ-042-21.08.2012-ՍՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ կատարելու մասին**

**Հոդված 1.** «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-205-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի «դ» կետի, 4.1-րդ գլխի վերնագրի, 24.1-րդ եւ 24.2-րդ հոդվածների վերնագրերի եւ տեքստերի «Զոհված՝» բառից հետո «Հայաստանի» բառը հանել:

**Հոդված 2.** Օրենքի 24.2-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ազգային հերոս կոչում շնորհելու կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրելու մասին Հայաստանի Հանրապետության նախագահի կամ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի հրամանագրի պատճենը.».

2) 4-րդ մասի 1-ին կետում «հետմահու «Հայաստանի ազգային հերոս» բառերը փոխարինել «հետմահու ազգային հերոս» բառերով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

**Հիմնավորում**

**«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման  
անհրաժեշտության**

Նախագծով առաջարկվում է սոցիալական աջակցության հավասար պայմաններ սահմանել Արցախյան ազատամարտում զոհված՝ ազգային հերոսների, ինչպես նաև Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձանց ընտանիքների համար:

Նախագծով առաջարկվում է սոցիալական աջակցության հավասար պայմաններ սահմանել Արցախյան ազատամարտում զոհված՝ ազգային հերոսների, ինչպես նաև Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձանց ընտանիքների համար:

Նախագծով նախատեսված շահառուների շրջանակի ընդլայնումը կհանգեցնի լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության:

Այսպես, «Արցախի հերոս» բարձրագույն կոչմանը հետմահու արժանացած 6 անձանց ընտանիքներից 2-ը նաև Հայաստանի ազգային հերոս են, իսկ 1-ը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի հրամանագրով Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրվել են 90 Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնցից 26-ը պարգևատրվել են Հայաստանի Նախագահի հրամանագրով, եւ նրանց ընտանիքներն արդեն իսկ ստանում են /կարող են ստանալ/ զոհված՝ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքի նպաստ:

Այսպիսով՝ «Զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքի նպաստ» ծրագրից լրացուցիչ կօգտվեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների 65 ընտանիք, որից 1-ը՝ Արցախի հերոսի, 5-ը՝ առաջին աստիճանի Մարտական խաչ շքանշանով, իսկ 59-ը՝ երկրորդ աստիճանի Մարտական խաչ շքանշանով պարգևատրվածի:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի հրամանագրով պարգրատրված անձանց ընտանիքների նպաստի վճարման համար տարեկան լրացուցիչ կպահանջվի 83,8 մլն դրամ /նպաստի 2012 թվականի համար սահմանված չափով հաշվելու դեպքում՝ ներառյալ վճարման ծառայության ձեռքբերումը/:

Բացի այդ, առաջարկվող փոփոխությունների ընդունման դեպքում «Զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքի նպաստ» ծրագրից լրացուցիչ կարող են օգտվել ոչ միայն ԼՂՀ նախագահի հրամանագրով պարգևատրված 65 Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտանիքները, այլ նաև՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացի համարվող, զոհված՝ Արցախի հերոսի՝ 4 եւ մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձանց՝ 311 ընտանիքները: